## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 26

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով

Ավագանին որոշեց՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ավագանու 2015թվականի
նոյեմբերի 23-ի N7 արտահերթ նիստի օրակարգը ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 23 -Ի ԹԻՎ 26 ՈՐՈՇՄԱՆ

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1.ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ N 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

/ԶԵԿ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

2.ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

3.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ 2015ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

6.ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

7.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

Արմեն Խաչատրյան

Տիգրան Սարգսյան

Արտակ Հերիքյան

Լևոն Թադևոսյան

Ավագ Միքայելյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 27

## ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով

1.2016թվականի բյուջեի նախագծի կազմման համար հիմք ընդունել 2015 թվականի հուլիսի 27-ի ավագանու N23 որոշումը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտի գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Տանձուտ
գյուղական համայնքի ավագանու
2015թվականի նոյեմբերի 23-ի
N 27 որոշման

| hh | աշխատա-կիցների քանակը | հաստիքացուցակ | պաշտոնային դրույքաչափը |
|---|---|---|---|
| | 14 | | |
| 1 | | համայնքի ղեկավար | 206000 |
| 2 | | համայնքի ղեկավարի տեղակալ | 132000 |
| 3 | | համայնքի ղեկավարի օգնական | 86000 |
| | | Գյուղապետարանի աշխատակազմ | |
| 4 | | գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար | 148000 |
| 5 | | գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ | 125000 |
| 6 | | գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ | 125000 |
| 7 | | գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ | 125000 |
| 8 | | գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 120000 |
| 9 | | գյուղապետարանի աշխատակազմի երկրերդ կարգի մասնագետ | 115000 |
| | | | |
| | | Տեխնիկական սպասարկման անձնակազմ | |
| 10 | | գործավար | 79000 |
| 11 | | էլեկտրիկ | 78000 |
| 12 | | հավաքարար | 72751 |
| 13 | | վարորդ | 77904 |
| 14 | | Խմելու ջրի վարձավճարներԻ գանձող | 72751 |
| 15 | 1 | Աղբահանության վարորդ | 103000 |
| | | | **1665406** |
| | 3 | Մշակույթի տուն | |
| 1 | | տնօրեն | 79000 |
| 2 | | հավաքարար | 72751 |
| 3 | | պահակ | 72751 |
| | | Ընդամենը | 224502 |
| | 2 | Գրադարան | |
| 1 | | վարիչ | 78000 |
| 2 | | գրադարանավար | 77904 |
| | | ընդամենը | 155704 |

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Տանձուտ
գյուղական համայնքի ավագանու
2015թվականի նոյեմբերի 23 -ի
N 27 որոշման

| հհ | աշխատակիցների քանակը | հաստիքացուցակ | պաշտոնային դրույքաչափը |
|---|---|---|---|
| | | | |
| | 11 | **Մանկապարտեզ** | |
| 1 | | Տնօրեն | 94000 |
| 2 | | դաստիարակ | 92600 |
| 3 | | դաստիարակ | 92600 |
| 4 | | դաստիարակ | 46300 |
| 5 | | երաժշտության դաստիարակ | 46300 |
| 6 | | խոհարար | 72751 |
| 7 | | դաստիարակի օգնական | 72751 |
| 8 | | դաստիարակի օգնական | 77904 |
| 9 | | հաշվապահ | 47000 |
| 10 | | պահակ | 77904 |
| 11 | | աման լվացող և լվացքարար | 72751 |
| | | ընդամենը | 792861 |

Ավագանու անդամներ՝

Արմեն Խաչատրյան
Տիգրան Սարգսյան
Լևոն Թադևոսյան
Արտակ Հերիքյան
Ավագ Միքայելյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 28

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1.Որոշել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ երկու հարյուր վեց հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՍԵՆ
3. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 29-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի վարչական սահմաններում 2016թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական
համայնքի ավագանու 2015 թվականի
նոյեմբերի 23-ի N 29-Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան` նոր շենքերի, շինությունների /ներառյալ` ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրք սահմանել` հիմնական օբյեկտների համար`

1/ մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում` այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև 200 քմ. ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ

2/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար`

ա.201-ից մինչև 500 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների հա մար 6000 /վեց հազար/ դրամ

բ. 501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 7000 /յոթ հազար/դրամ

գ.1001-ից մինչև 3000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 35000 / երեսունհինգ հազար/ դրամ

դ.3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանու մակերես ունեցող օբյեկտների համար ` 50000 / հիսուն հազար/ դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար`

3/ մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1000 /հազար/ դրամ

4/ 20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2000 /երկու հազար/ դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների / բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով`

1/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցներ /այդ թվում` ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն` 500 /հինգ հարյուր / դրամ

2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույց-

ների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի /ա/ ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարության կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 2000դրամ /երկու հազար/:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 4000 /չորս հազար/

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 4000 /չորս հազար/դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ /երեք հարյուր հիսուն /՝ մեկ քառակուսի մետրի համար

2/ հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

ա.հեղուկ վառելիքի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար 150000դրամ

բ.սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար 200000դրամ

3/համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է ՝

ա.հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 6000դրամ

բ.ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝1000դրամ

6.Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000դրամ

7.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի անվանումը օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 70000դրամ:

8. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ /հիսուն հազար/:

9.Համայնքի տարածքում՝ առևտրի ,հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները , բաղնիքները /սաունաներ/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1/ առևտրի օբյեկտնեի համար 35000 /երեսուն հինգ հազար/ դրամ

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկների համար 60000/վաթսուն հազար/դրամ

3/ վիճակախաղերի կազմակերպման համար 120000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամ

4/ բաղնիքների /սաունաների / համար՝150000/մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ

5/ խաղատների կազմակերպման համար՝300000 /երեք հարյուր հազար/ դրամ

6/ շահումով խաղերի կազմակերպման համար՝300000 /երեք հարյուր հազար/ դրամ:

10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1ք.մ. տեղական տուրք սահմանել՝

1/ծխախոտի արտաքին գովազդի համար 2000/երկու հազար/ դրամ

2/ այլ արտաքին գովազդի համար 1000 /մեկ հազար/ դրամ

3/ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2000/երկու հազար/ դրամ

4/ թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2500դրամ /երկու հազար հինգ հարյուր/

5/դատարկ գովազդային վահանակների համար 700 / յոթ հարյուր /դրամ:

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար 1000/ մեկ հազար/ դրամ:

12.Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ:

13.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցների վճար 1000 /մեկ հազար /դրամ:

14.Համայնքի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու ,հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցված ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000/մեկ հազար/դրամ:

15. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխվող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000/երեք հազար / դրամ:

Արմեն Խաչատրյան

Տիգրան Սարգսյան

Արտակ Հերիքյան

Լևոն Թադևոսյան

Ավագ Միքայելյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 30-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2016թվականին գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱՐԽԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Տանձուտ
գյուղական համայնքի ավագանու
2015թվականի նոյեմբերի 23-ի
N 30-Ն որոշման

Դրույքաչափեր Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2016 թվականին գանձվող վճարների

1. Ջրամատակարարման համար գանձվող վճար սահմանել յուրաքանչյուր շնչից 200դրամ:

2. Ծնող գումար սահմանել մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայից ամսական 6000դրամ:

Արմեն Խաչատրյան

Տիգրան Սարգսյան

Արտակ Հերիքյան

Լևոն Թադևոսյան

Ավագ Միքայելյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 31-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, 56-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի 2015թվականի բյուջեն հաստատելու մասին » N39-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.Վարչական բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունը

1/հողի հարկի պլանով նախատեսված 8100հազ.դրամը պակասեցնել 1300հազ.դրամով ,հողի հարկի պլան հաստատել 6800հազ.դրամ

2.Վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունը:

1/ 09/1/1 4511հոդվածը պակասեցնել 1300հազ.դրամով

2/պահուստային ֆոնդի 11/1 2 4891 հոդվածից 541.5 դրամը տեղափոխել 06/3 1 4212 հոդվածին

3/ 06/4 1 4212 հոդվածից 100հազ.դրամ տեղափոխել 06/3 1 4212 հոդվածին:

4/ 01/6 1 4241հոդվածից 100հազ.դրամ տեղափոխել 01/6 1 4269հոդվածին:

5/ 01/1 1 4221հոդվածից 100հազ.դրամ տեղափոխել 01/1 1 4261հոդվածին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող [illegible] օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՅԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 32

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1.Զիջել համայնքի բնակիչների գույքահարկը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 32 ՈՐՈՇՄԱՆ

Ցուցակ համայնքի բնակիչների գույքահարկի զիջման

1.Աթոյան Ռոման Գագիկի ՎԱԶ 2121մակնիշի 34TU767պ/հ փ/միջոցի գույքահարկը ընդամենը 20282դրամ , որից 2014թվական 8000դրամ , 2014 թվականի տույժ 4282 դրամ ,2015թվական 8000դրամ :

Ավագանու անդամներ

Արմեն Խաչատրյան

Լևոն Թադևոսյան

Արտակ Հերիքյան

Տիգրան Սարգսյան

Ավագ Միքայելյան